ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/58 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **21 նոյեմբերի 2024թ.**

2024թ-ի նոյեմբերի 21-ին ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք հասցեում գտնվող «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/58 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Լ. Ավետիսյան՝ Հիմնադրամի արտադրատնտեսական բաժնի ղեկավար,

Ա. Բաղրամյան՝ Հիմնադրամի գլխավոր հաշվապահ,

Ս. Մեսրոբյան՝ Հիմնադրամի հաշվապահ.

Նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Ավետիսյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/58 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի կողմից հրավերով սահմանված կարգով պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու մասին:
2. Ընթացակարգը 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին:

1.ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/58 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՎԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը Հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/58 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 0291076, հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան փող 25/14շ 76բն), սահմանված կարգով և

ժամկետներում՝ մինչև 20.11.2024թ-ը ներառյալ, չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը, ինչպես նաև չեն ներկայացվել պայմանագրի և որակավորման ապահովումները՝ ուղեկցող գրությամբ:/.

Հանձնաժողովն որոշեց.

1. ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

2. Ընթացակարգը՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները.

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ԸՆԹԱՑԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովին ներկայացրեց Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշման տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Ընթացակարգը 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Ավետիսյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Բաղրամյան _____

Ս. Մեսրոբյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Էլոյան _____